

Ա Ղ Վ Ա Յ Ի Ն

Վսեմաշուք և մեծ Սպարթալեան մահտեօի էադուպ էֆէնտիի ազգային հին հիւանդանոցի վերայ ի հիմանց նոր կանգնել տուած հոյակապ շինութիւնը գրեթէ վերջացած լինելով, նոր տարւոյս առաջին օրն առջի երեկոյն հսկումն եղաւ յիշեալ հիւանդանոցի սուրբ Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, և հետեւեալ առաւօտուն Պղծեալ տաճարի օրհնութիւնն և ազօթքներն կարգացուելով նորակառոյց մատրան սեղանը և սուրբ Լուսաւորիչ նորակար պատկերն օծուեցան. և ապա սուրբ պատարադի խորհուրդը կատարուեցաւ ի ներկայութեան բարեխիտ բարեպաշտից: Սուրբ պատարագէն առաջ սուրբ Ստեփաննոս եկեղեցւոյ աւագ լուսարար բարեշնորհ Մակար վարդապետը աւուր հանդիսին յարմար ատենախօսութիւն մի բրու, յետոյ գեր. տէր Մելքիսեդեկ Ս. Առաջնորդը նոր տարւոյ առթիւ համառօտ բայց խիտ սրտաբուխ ծանուցում մի խօսեցաւ: Ժողովուրդք խիտ զգածուած էին, ինչպէս սովորաբար կը պատահի այսօրինակ կրօնական դէպքերուն մէջ, և ամենուն խօսակցութեան և ուշադրութեան առարկայ էին Սպարթալեան Աստուածատէր և ազգասէր երկու մեծաշուք եղբարքը, որոց անուանքն անեղծ պէտք է դրոշմուած լինին Չմիւռնիոյ Հայ տարեգրութեան մէջ:

Ս. Ծննդեան ութօրէիցին հանդիսաւոր պատարագ պիտի լինի դարձեալ յիշեալ սուրբ Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, և յետ լրման խորհրդոյն բոլոր ազգայինք անխտիր հրաւիրուած պիտի լինին մասնակցելոյ մատարին ըստ հին բարեպաշտական սովորութեան քաղաքիսոր պիտի սրուի յիշեալ հաստատութեան մէջ:

Օրուանս խնդիրն է Հայոց համար Ս. Պատրիարք Հօր առ Բ. Գուռն տուած հրատարականք իւր պաշտօնէն, պաշտօն մի որ երթալով ծանրացաւ և մեք կը պարտաւորուիմք ոչ ուրիշ անգամներ տուած հրատարականքու պէս նկատել այս անգամ: Պատճառը հարկ չեմք համարիլ հետազօտել, կրնայ շատ պատճառներ ունենալ. միայն աս կայ որ ուրիշ անգամներ մեք ազգայինքս կը թախանձէինք որ յետս առնու հրատարակա-

շատ ժամանակներէ ի վեր բարձիթողի կը մնան: Եստ գեղեցիկ խորհրդով մեզ տարւոյն առաջին ամիս սահմանած է նաւասարգը և որուն առաջին օրն ալ տարեգրուի. բայց կը պարմանանք թէ ինչ խորհրդով Յունվարն մեզ տարեգրուի կրնայ ըլլալ, մինչդեռ Հռովմայեցիք իւրաքանչիւր առաջին ամսոյ առաջին օրը կամ ամսագրուիմք «Գալենտէ» կ'անուանէին, և նոյն բառը իւր վերնագիր իւրաքանչիւր ամսոյ սկիզբը գլխագիր տաւերով կը գրէին. ահա սակէ սովորութիւն եղաւ մեր ազգին մէջ հայկազան տաւադարձութեամբ «Կալանդ» գրել. կամ ըստ Յունաց թարգմանի ի մեզ «կայ—աղ—անդ» որ չարն Յուլիանոսի ժամանակ կեսարիայի վրայ ըլլալիք սպառնալեաց ժամանակը, Գրիստոսի սուրբ ծննդեան քառասորեայ պահոց միջոցը կ'ակնարկէ, որ մեզ Հայոցս համար նշանակութիւն մը չունի:

Նաւասարգ ամիսը շատ նուիրական է, չէ թէ մեզ միայն, այլ համայն աշխարհի ևս. քանզի նոյն հասակեան ջուրը հեղեղէն տապանաւ ազատուելուն ապահովութեան օրը տարւոյն առաջին ամսոյն առաջին աւուր կը հանդիպի. որ նոյն օրը անյիշատակ չ'ձգելու համար նաւասարգ անուանեց, որ թարգմանի «նաւաստ—աւարտ» կամ «նաւ—հաս—արգ». ինչու որ նաւուն նաւաստութիւնը այն օրը աւարտեցաւ. և նոյն անկից սկսաւ նոր տարին:

Այս խորհրդաւոր բառին ստուգաբանութեանը համար, ազգիս պատմաբիտաց ոմանք, ինչպէս գեր. Խորէն Ալըքեան բանասէր եպիսկոպոսը(1), կամ բազմահմուտ ազգասէր հոգեւորդ Կ. վարդապետ Շահնազարեանց(2) մանրամասն

(1) Տես ի «Յոյս օրագիրն Արմաշու» քիւ. 30 յերես 137:
(2) Տես «Արշալոյս Արարատեան» քիւ. 376:

նր այս անգամ ոչ թէ պիտի համարձակուիք թախանձելոյ, այլ եթէ ինքնին իսկ կամայլով իւրիք հզօր ազգեցութեան երեսէ ստիպուել յետս կոչել իւր հրատարագիւրը, մեք պիտի բողոքեմք և պիտի ուղեմք իմանալ թէ ինչ թէ ութութեամբ յետս կոչուած է, և ինչ վստահութիւն ունի իւր պատրիարքութեան պաշտօնին վերայ, որոյ նշանակութիւնը կորուսած է իսպառ Բ. Գրան առջև, և ընդունած կայտերազրում հրատարականքը մեռեալ տաւեր մնացած են:

Լրագիրը, եթէ ստոյգ է, կ'ըսէր իւր Գեկու 25 թուովը, թէ Պէյլիկէի—Պէյս Պատրիարքարան եկած է նախարարաց կողմէ խնդրելոյ համար որ յետս առնու հրատարագիւրը. բայց ն. Սրբազնութիւնը յանձն չէ աւեր: Լրագիրը կը յաւելու ըսել թէ ն. Սրբազնութիւնը արդէն յայտնած է թէ՛ Կեմ—Եպարդ սոյն և թէ գետպանաց, որ պիտի պարտաւորի հրատարակել թէ Հայաստանի մէջ հարստահարութեանց անմիջապէս դարման և վախճան չարուի: Անդղիոյ վսեգետպանին առած պատասխանը խիտ կտրուկ է, այն է համբերութիւն, որ նարէտտին հոճային մէջ առակը մեզ կը յիշեցնէ: Երանի թէ այդ համբերութեան խրատը Գիւրտերուն և միւս հարստահարող ժողովրդոց ալ արուեր, որ նորա ևս սպասէին մինչև բարենորոգութեց նոր ծրագրին գործադրութեան սկսուելուն:

Յիշեալ լրագրովը 27 թուով կ'ըսէ գարձեալ թէ Կեմ—Եպարդ սուր հրատարագիւրը ետ դարձուցած է խնդիր չյուզելու համար. և Ս. Պատրիարքն ալ չէ ընդունել խնդիր յուզելու համար. թէպէտ թուովը բերողը հոն թողուցեր դայցեր է:

Կ. Պոլսոյ ազգային վաճառականներէն Բաղարճը Մանուկ աղա անուն, որ անյետախնդր վախճաներ է, 1500 ոսկոյ կտակ մի թողուցած է ազգին, որոյ 5000ը Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցւոյ շինութեան համար է եղեր. և 1000 ոսկին Հայաստանի մէջ յարմար քաղաքի մէջ վարժարան բանալոյ յատկացուցած և առ այս կտակակատար կարգած է Ունճեան մեծ. Աբիկ էֆէնտին: Սոյն դուրսարով խնամակալութեան մի ձեռք Կ. Պոլսոյ մէջ անչարժ կարուած մի դնոյ պիտի առնուի եղեր և նորա հասութով

և իմաստալից կերպիւ գրած են. մանաւանդ վերջին ատեններս Ռուսիոյն տամարը ճիշտ մեր այս ըսածներուն կը համապատասխանէր. այլ ցաւ է ըսել որ ասոնք ամենքն ալ բարձիթողի մնացին, թէև մերինն ալ այս կարգէն սեպուելու տարակոյս չունիմք: Այս է ցաւալի կէտը՝ որ խաւարը լոյս կ'ուզէ, կամ հիւանդութիւն մը գեղի պէտք ունի. և այն դեպք բժիշկը գիտեն թէ օգտակար պիտի ըլլայ. և զայն չ'գործածելը

Եւ միթէ մեզ պարծանք չէ մեր տարեգրիսին նաւասարգէն սկիզբ. որուն առաջին օրը մեր նախնիք նոյէն ուսեալ վարդապետ և ամանորաբեր տօն կը կատարէին, և Աստուծոյ զոհ կը մատուցանէին նոյն օրը, որ կուսպաշտութեան ժամանակ ևս «Տօնք նաւասարգաց» կ'անուանէին և վերջը սուրբ Գրիգոր Լուսաւորիչ ուրիշ օրերու վերածեց զանոնք: Ահա այս մեզ աւանդ մնացած նաւասարգը իւր 11 ընկերօքը մեր եկեղեցական տօմարին մէջ կրնանք գործածել և մեր տօները անոնց վրայ կարգաւորել առանց այլայլութեան:

Ռւրեմն գառնանք մեր բուն խնդրոյն, այսինքն ըստ մեզ երեք գլխաւոր և երեկի սխալանաց վրայ խօսիլ, ուսկից ամեն տօնք իրենց յատկացեալ օրերէն այսր անքը կը խտտորին:

Ա. Ս. Ծննդեան ճիշտ օրը իւր ուղիղ օրէն խտտորին:

Բ. Ս. Զատիկ հուշակաւոր տօնը իւր յատկացեալ օրէն երբեմն 1, երբեմն 2, երբեմն 4 շաբաթ վերջ ձգել դէպի յամառն:

Գ. Ծառադառնի Հայոց ընդ Յունաց:

Ա. Գրիստոսի Ս. Ծննդեան և մկրտութեան տօնը Գրիստոսեայ ազգը տարբեր տարբեր եղանակաւ կը կատարեն, այսինքն պապականք ի 25

նոր կառուցուելիք վարժարանին մատակարարութեան պէտքը հոգացուի. կառուցուելիք վարժարան ըսածը կ'երևի թէ Սրբարատեան ընկերութեան կ'ակնարկէ:

Հանգուցեալը սոյն դուրսէն զատ ազգային հիւանդանոցին ևս 20ի չափ կառուածներ գտնուեցան է: Օրհնեալ ինչին այսպիսի անձինք և ապրին անմահութեան աշխարհին մէջ:

—Լրագրոյ վերջին թիւը սպուելոյ վերայ էր երբ ընդունեցանք հետեւեալ ծանուցական գրութիւնը, զոր այս անգամ կը հրատարակեմք յայտնելով յիշեալ ընկերութեան վերայ մեր ունեցած համակրական զգացմունքները, որոյ և յաշուութեան ի որո՞հ կը վախճաքիմք:

Կ. Պոլիս, 19 Գեկտեմբեր 1878:

Մեծապատիւ խմբագիր Տնօրէն Արշ. Արարատեան Չմիւռնիս:

Գարոցատիրաց Արևելեան ընկերութիւնը Մշջ մէջ Երկրորդական վարժարան մը հիմնել որոշած և այս նպատակաւ պարոն Փիլիպոսոս Երեցեան անցեալ Հոկտ. 9ին ճամբայ հանած էր ոչեք եղած զբերով և զարուցական ամեն հարկաւոր նիւթերով:

Այս անգամ Մշջ գերապատիւ Առաջնորդ Գրիգորիս արքեպիսկոպոսին և պարոն Քի. Երեցեան ընդունուած նամակներն կը սեղեկանամք թէ՛ Նոյեմբեր 13, երկու շաբթի օր Ընկերութեանն առաջին վարժարանին բացումը հանդիսապէս կատարուած է Ս. Մարիանէ թաղին մէջ, ուր առաջին օրէն սկսեալ 500ն աւելի աշակերտք կը յոճարեն և Տնօրէն խորհրդոյս ուսումնական ծրագրին համեմատ դաստիարակութիւնը արդէն սկսածն:

Արևելեան, մեծապատիւ խմբագիր, հրատարակել զայս ի գիտութիւն անգամոյ և համայն ազգայնոյ:

Փոլս Առնազպիւր Առնապետ
Կ. Պ. Սըվաճեան Ա. Տամատեան

Երուսաղեմայ սուրբ Յակոբայ վանքը:

Յիշեալ վանքին ցաւալի վիճակի մէջ դառնալի կը կարգաւոր ազգային լրագրոց մէջ. և մեք մեղի կը զարմանամք, գիտնալով որ Ս. Յակոբայ վանքը ոչ թէ այս տարի, այլ 1865 թուականէն ի վեր ցաւալի կացութեան մէջ կը գտնուէր, որովհետև նոյն ժամանակէն սկսաւ կանխաւ դուրս գալ աննշան պարտուց վերայ հետողհետեալ ակնընդէն փոխառութիւնները և մինչև 1872 հասած էր 14,000 լիբայի ըստ ցուցակին, որոյ մի

Գեկու Ծնունդ Տեառն, և ի 6 Յուն. մկրտութիւն ըստ նոր տուածի: Յունադաւանք ի 25 Գեկու Ծնունդ Տեառն, և ի 6 Յուն. մկրտութիւն ըստ հին տուածի: Բայց Հայաստանեայց Առաքելական սուրբ եկեղեցին ծնունդը և մկրտութիւնը ի միասին կը տօնէ, ի 6 Յունվարի ըստ հին և առաքելական աւանդութեան: Այս երեք ազգաց տօնածին օրն է ճիշտը:

Գուկաս Աւետարանիչը կըսէ, գլ 1 համար 23, «Եստ լրման աւուրց պաշտամանց յորժամարձակեաց քահանայապետն Զաքարիա զժողովուրդն, և ապա գնաց ի տուն իւր», որ էր ի թշրնի 22 և ի Հոկտ. 10 և ի Մարգարց Ժ2 յաջալեզիտարէթ. և արդ այս օրէն մինչև Ապրիլի 7ը կընէ 6 ամիս, որ է Աւետուան հրեշտակապետին առ կոյսն Մարիամ, Գուկաս գլ 1 համար 26, և ահա այն օրէն մինչև 9 ամիս և 5 օր կը մի բանն Աստուած յորովայնէ կուսին Մարիամու, Հոկտ. 10, յաւուր կիւրակէի ըստ վկայութեան սրբոյն Պօղոսիարպոսի աշակերտին Յովհաննու Աւետարանի: (1)

Մկրտութեան համար ալ դարձեալ նոյն Գուկաս Աւետարանիչը կ'ըսէ, գլ. 23. «Յիսուս էր ամաց երեսնից սկսեալ ի ծննդենէ անտի մինչև ցմկրտութիւն»: Հայաստանեայց եկեղեցին զերկուսը ի միասին կը տօնէ, ըստ սուրբ Գրոց, զոր Յոյնք և Պապականք ևս ի միասին կը կատարէին Յուստինանոս կայսեր ժամանակը, անկէ ետքը տարբեր եղանակաւ սկսան տօնել:

Ռւրեմն վերոյգրեալ Աւետարանաց և հոյրապետաց գրութիւններէն կ'իմանամք որ ստոյգ օրն է ի Յունվարի 6 ըստ հին տուածի, հետեալ

(1) Տես «ի դրախտ ցանկալի», գլուխ չորրորդ, ճարգ 76, յերես 146, յօրինեալ ի Ղազար Աստուածաբան վարդապետ ցանկեցոյ:

որինակն ունէի քովս . իսկ հիմա վեց տարուան մէջ կրկնապատկիլ և մինչև 30.000 ոսկեոյ հասնելը , եթէ ճշմարիտ է , ոչ սակաւ ևս դարձանայի է : Սակայն այս ստոյգ է որ յիշեալ աղբ. մեծ հաստատութիւնը ազգիս կարեկցութեանը և ձեռնտուութեանը կարօտ է . որ յառաջ դարձան տանելոյ է , որ անդամ մի պարտքէն ազատի , և յետ այնորիկ նորա կառավարութեան կանակը փոխուի , որոյ յոսի տնտեսութենէն դոյացած է մեծագումար պարտքը :

Լոսոյ պատուարժան խմբագիրը կրկնած է զիտեալ թէ՛ կրուստղէմ իւր ներկեցոյ տաղնապարից վիճակէն շուտով կ'ազատի եթէ իւր սեփական իրաւունքներն իրեն վերադառնան . եթէ իրաւանց վերադարձ ըսելով նուիրակութիւնը կ'իմանայ , զոր առաջները իրաւունք ունէր գործադրելոյ , հիմակ այն գարն անցած է , նուիրակելի ժամուրդը չէ մնացած . իսկ եթէ իրաւունք ըսելով հողային ստացուածքները կ'անկարկէ , զոր ունի կրուստղէմ Ալէքսանդրիոյ մէջ , կըստիւր պատուարժան խմբագիրը իւր կարծեաց մէջ , Ալեքսանդրիոյ հողը որ պարտէջ մի է և երեք կտոր չէնք , աղբէն Ս . Երուսաղէմոյ սեփականութիւնքն են և իրեն դարձած դորուութեամբ այն պայմանադրոյն զոր գեր . Սիմոն եպիսկոպոս կ'ըլլցնէ և հանդուցեալ խոնարհութեամբ ստորագրած են . և մինչև ցարդ տէր չլինելուն պատճառն է ամեն . Տէր Եսայի Պատրիարքին անհողութիւնը , որովհետև ամեն պայմաններն կատարուած են . յիշեալ եպիսկոպոսաց և վսե . Նուպար փաշայի մէջ ըստ օրինի տեղական կառավարութեան և արձանագրեալ ի տոմարս տեղւոյն ամեն ժողովոց և դատարանաց . կրմնայ միայն որ Ն . Սրբազնութիւնը իւր կողմէն փոխանորդ մի զրկէ կրուստղէմայ կառավարութեան կողմէ վաւերացած , ու Ալէքսանդրիոյ երթալով իւր իւրեւրոյ տայ , զորք վաւերանայ և հետեւապէս օրինաւոր տէր լինի Ս . Աթոռը իւր ստացուածոց :

Մեք Ալէքսանդրիոյ եղած ժամանակինս ի խնդրոյ վսե . Թագաւոր փաշայի երկիցս դիր գրեցինք Ն . Սրբազնութեան տէր Եսայի Պատրիարքին որ փութայ փոխանորդ մի զրկել և օր յառաջ տէր լինել իւր ապրանքին : Գ. Ժաղաքաբար նա և ոչ մէկ գրոյս պատասխանեց . ինչ շահեցաւ լուծութեամբ և ինչ կորոյս . շահածը

բար ըստ իմ տկար կարծեաց՝ փաստիւք ապացուցեալ նոր տոմարի 12 օր տարբերութիւնը հին տոմարի Յունվարի 6էն զեղջիւրով կըհասնի Գեկտ . 25 ըստ հին տոմարի , և Յուն . 6 ըստ նոր տոմարի : Դեկ . 25ի սյծ մ'Յոյնք կըտօնեն ծնունդ Տեառն որ է ուղիղ , այն ալ ոչ թէ հաշուելով կամ գիտմամբ , այլ պատահաբար , որ Չոք դարուն երբ արեգակը Մարտի 8դ օրը պիտի մտանէ յառաջին տօտիճան իօպին , այն ժամանակ հին տոմարին և նոր տոմարին տարբերութիւնը պիտի ըլլայ 13 օր , ահա այն ատեն բոլոր քրիստոնէայ ազգաց տօնախմբած ծնունդը ուղիղ պիտի ըլլայ , այլ սխալ , և մինակ պատկանաց տօնած միտուութիւնը ուղիղ :

Բ . Ս . Չաստիկ հռչակաւոր տօնը սուրբ Գրոց որոշեալ օրը չկատարուելուն համար , չենք ուղեր մանրամասնաբար խօսիլ , սա չսիւր կըսենք թէ՛ ընթերցողք կրնան արժա . տէր Երեմիա քահանայի , բաղմահմուտ ծերունւոյն « Հետադառութիւն տոմարական վրիպակաց » վերնագրով տեսարակը առնուլ և կարդալ :

Գ . Արեգական մեծ շրջանի տեւողութեան միջոցին , որ է 532 տարի , կ'ըսուի թէ չորիցս կը պատահի ծագողատիկը . պատահեալ և պատահելի ծագողատիկաց ծագութեան մէջ նշանաւոր է մեր (6) տարեգիրը (6) վերադրով և (9) եօթներեկաւ , ինչպէս որ պատահեալ է յամի Տեառն 1634 . յամին 1729 . յամին 1824 . կըդուշակուի պատահիլ ևս յամին 1908 և 2071 . դարձեալ կըդուշակուի ծագողատիկ յամին 1957 , որոյ վերադիրն 9 (9) , եօթներեկան 1 (Ա) և գիր տարւոյն (Գ) է . բայց այս ոչ այնչափ հաւատարմ է : Վերջապէս այս ծագողատիկաց պատահումը մեր ազգը ծագողի կ'ընէ առաջի Յունաց . ահա այս խնդրոյն համար հոգեւորս Տ . Տ . Եփրեմիկութեան

չկայ . իսկ կորուսածն է նամակները գրած ժամանակէս մինչև ցարդ 2580 նաբողէոն ոսկի , վեց տարուան մէջ , տարին 430 ոսկիէն , որ զուտ վարձք է երկու տնէ , մէկ գետնէ և մէկ պարտիզէ . հիւանդանոց մի ևս կայ խիստ , որ թերևս այս տարի վրած է , ուրտեղ աղքատ ընտանիք կըբնակին . իսկ եթէ նորոգուելոյ լինի , կրնայ 150 ոսկի վարձք բերել :

Իսկ եթէ գեր . Սիմոն եպիսկոպոսի ստորագրած օրէն հաշուելոյ լինիմք , այն է 1869էն ի վեր , մինչև ցայսօր կ'ընէ այն ժամանակի վորձուց տարբերութիւնն ալ հաշիւի դնելով , իւր 4500 լուիճ : Եթէ կըյուսայ Ն . Սրբազնութիւնը թէ սոյն ստակն ամբողջապէս օր մի պիտի ձեռք բերէ , չեմք յուսար , վասնզի արձանագրութեանց մէջ ինչպէս տեսանք՝ գրուած է որ լաֆրը արուած օրէն պիտի սկսի Ս . Աթոռը վարձքերը ժողովել :

Կորուսան յայտնի եղաւ . իսկ շահածն ինչ և շահելիքը ժամանակի խնդիր է , Ն . Սրբազնութիւնը կըսպասէ թերևս որ այս գարն անցնի , որ Նուպար փաշայի ու Թագաւոր փաշայի դար է . բայց կըստիւր , դարը անցնելէն յետոյ ևս փոփոխութեան ենթարկուելիք ոչինչ չկայ . տէրութեան արձանագրութիւններն անջնջելի են . Եսայի Պատրիարք եթէ խոհեմութեամբ կ'ուզէ վարուիլ , ուղուած փոխանորդը իւր կողմէն զրկելով վսե . Թագաւոր փաշայի գթութեան և կամացը թող յանձնէ ամեն ինչ , և սոյն ժամանակ պիտի տեսնէ որ չէ խաբուեր և իւր բոլոր համոզումները պիտի փոխէ , զոր ունեցած է մինչև ցարդ . յիշեալ փաշային գէմ , որ իւր խստութեանը հետ մէկտեղուի և զգայուն սիրտ բարեպաշտ ոգի և վեհանձնութիւն :

Սոյն խօսքերը կարեկից սրտիւ կ'ուղղեմ Ն . Սրբազնութեան , և գիտեմ որ ինքն ալ կըզգայ իմ սրտիս և իմ խօսքերուս ուղղութիւնը : Խստութիւն բանեցնել օգուտ չընէր Ալէքսանդրիոյ մէջ . Եսայի Պատրիարք պէտք է հասկնայ մեր ըսածը Տ . Հ . Ք . Սասնալեան :

Լոսոյ մէջ կրկարգամք թէ սուրբ Երուսաղէմի միաբաններէն Ձէյթունցի Աթոռաւոր վարդապետը , որ բաւական տարի Յոպպի վանաց տեսչութեան պաշտօնը վարած և բաւական ծառայութիւններ մատուցած է Ս . Աթոռոյն , միա-

զիկոսը արտօնութիւն կուտայ Կ . Պօլոյ Անդրիանուպօլսեցի երջանկայիշատակ Պօլոս Պատրիարքին , որ ծագողատիկ խնդիրն բառնալու համար Յունաց առաջնորդարանի հետ բանակցի . այս զեղծումը այն ժամանակ մեզ պատիւ էր անդադարձաբար :

Ի վերջոյ կրփափաքէինք տեսնել որ արժատէր Երեմիա քահանայի տոմարական վրիպակաց վրայ ընելիք բարեկարգութեանց առաջարկութիւնը ընդունելի ըլլար , (Տ . Երեմիայի կըսեմ . քանզի սոյն ալեւոր ծերունիին իւր տոմարական տաղանդով և աստղաբաշխական արհեստով կրնամ ըսել որ Տաճկաստանի մէջ եզական է , որ 39 տարիէ ի վեր ազգային տարեկան օրացոյցին հեղինակութեանը կաշխատի) . վեհաշնորհ Ս . Կաթողիկոսի և իւր ձեռնհաս իշխանութեան առջև , որպէսզի ժամ յառաջ ամենքս ալ այդ գեղեցիկ բաղձանաց հասնելով միթէ արուիք շատ մը նախնեաց յիշատակներով . և մեր ազգն ալ լուսաւորեալազգաց առջև աշխարհաբար բարի համբաւ ստանայ . գէթ ի մասին եկեղեցական դրութեան , և կերպով մը յառաջադէմ ու քաղաքակրթեալ ազգաց կարգն անցնի :

Ազգին և եկեղեցւոյ այս զգալի թերութիւնները լրացնելու թէև ազգին համայն պատմագէտ ու իմաստասէր անձանց պաշտօնն է , մանաւանդ եկեղեցականաց , եկեղեցականաց կ'ըսեմք , վասնզի նոցա պաշտօնն է եկեղեցւոյ ու կրօնից օրէն հողատարութեանը կամ կարգադրութեանը փոյթ տանիլ , և որ աւելին այս մասին այն սուրբ ու նուիրական պաշտօնն ու պարտաւորութիւնը Ն . Սրբազնութեան Էջմիածնի վեհ . Կաթողիկոսին կըպատկանի կատարել , իրեն աջակիցներ գտնելով , և անշուշտ եմ որ

բանութենէ դատուելով՝ պատկան եկեղեցւոյ յարեր է . թէպէտև պատճառը չլիչեր , սակայն յայտնի է որ ներքին համազումը չէ , այլ միաբանութեան կամ սրբազան Պատրիարքին գէմ գծաձեւելով սոյն տկար միջոցին գիմած է իւր վրէժխնդրութիւն : Յիշեալ վարդապետը կարող էր հեռանալ վանքէն և քաղաքէն՝ կըտրելով ամեն աւելնչութիւններ որոնք կրնան օտնկապ լինել ինքեան նոյն երկրին մէջ մնալոյ , և այլուր մեկնիլ իւր ուխտիւք ընդունած վեղարով քան թէ պատկան քօղով , և խղճահար մնալ սուրբ երկրին մէջ :

—Վանէն ազգային Պատրիարքարան գրուած պաշտօնական և ուրիշ մասնաւոր նամակներ կը ծանուցանեն թէ՛ տեղացի ազգայիններէն մաս մը Պարտկաստան , մաս մը Ռուսաստան և մաս մ' ալ յառաջիկայ գարնան այլուր գաղթելու պատրաստուեր են գաւառին մէջ ապահովութիւն չըլլալուն համար . նոյնպէս Աղթամարայ տէր խոյատուր կաթողիկոսը Աղթամարայ վանքը նստել անկարելի դատելով հարստահարութեց պատճառաւ , վան մեկնելու պատրաստուեր է :

—Գարձեալ նոյն լրագրին մէջ կրկարգամք , թէ Սարոյի մէջ բանտարկեալ Ձէյթունցոց երկարատև կալանաւորութեան դատապարտուած լինելը ծանուցանող կիլիկիոյ կաթողիկոսին մէկ հեռագիրը կ'իմացնէ եղեր նաև թէ Ձէյթունի վանահայր Սարգիս վարդապետը իւր վանքին կալուածոց տասանորդի տուրքը չկարենալ վճարելուն վերայ , տեղական կառավարութեան կողմանէ շղթայի զարնուելով բանտ նետուեր է : Աստուած պէ՛րբէ՛ն պահէ : ԼՐԱԳԻՐ

—Հայրենիք իւր Գեկտ . 27 թուով կըսէր թէ , Յրնուզի գեր . Նիկողայոս արքեպիսկոպոսը այն օրը բանտէն հանելով ի պատրիարքարան պիտի զրկէն եղեր ընդ . երաշխաւորութեամբ , այժմ կ'իմանամք թէ Պատրիարքարան եկած է :

ՎԵՃԱԿԱԳԻՐ ՀԱՅՈՑ ՁՄԻՆՈՆԻՈՅ

Ազգային արձանագրութեանց ակնարկող ազգասէր անձ մի ցաւօք սրտի պիտի տեսնէ քաղաքիս Հայ ժողովրդեան թուական յետախաղացութիւնը . կարծես թէ բնութիւնը հակառակ կրնէր գործէ Հայ հասարակութեան վերայ , փոխանակ տարուէ տարի բաղմանալոյ , կրնուազի նոցա թիւը ինչէ ասոր պատճառը խիստ դիւ-

կըզտնուին , առանձին չ'մնար : Թերևս ներկայ Ս . Կաթողիկոսը առարկէ թէ նախորդը շատ բան չեն կատարած , միթէ են պիտի կատարեմ , կամ թէ՛ իմ յաջորդներս թող կատարեն : Անցեալը մեկզի թողու՛ք , վասնզի եթէ անցեալը չ'նենք , վշտաց դուռ և սխուր տեսարան մը կըբացուի մեր աչաց առջև . մեք միշտ ներկայն խորհելով պէտք է շանանք ազգին և իւր եկեղեցւոյ փառքն ու պարձանքն աւելցնող անօրէնութեանց ձեռնամուխ ըլլալ , քանի որ կրօնական ազգ մը կըսեպուինք շատ ազգաց առջև . մեզի համար ժամանակին սպասել կամ ծուլութեամբ անցնել մեր ժամերը , ուրիշ բան չեն նշանակեր , եթէ ոչ յետադիմութեան քայլ առնուլ : Մենք սպասելու պէտք չ'ունիմք օտարէն յոյս կամ ակնկալութիւն մեր ազգին յառաջադիմութեան համար . մեր յառաջադիմութիւնը մեր ձեռքն է , միայն թէ կամք ունենամք :

Ուրեմն թող ներուի մեզ ըսել թէ՛ մեր սոյն օրինաւոր առարկութեան նկատմամբ ազգիս այն ամեն անձանց թէ կըբերական և թէ աշխարհական , որոնք ազգի և եկեղեցւոյ սիրոյն նախանձանդիւր և աստղաբաշխական արհեստին թիւնը կըհրաւիրեմք , ծանուցանելով նաև մեր յարգոյ ուշիմ ընթերցողաց որ եթէ զիտողութիւն մը ընող ըլլայ մեր սոյն յօդուածոյն , և հակասութիւն կամ սխալում նշմարէ , թող բարեհաճի մեզ հաղորդել , զոր սիրով կընդունիմք , միայն թէ ուղիղ ըլլան :

Չմիւռնիա , 11 Դեկտեմբեր 1878 :

Սիմոն տէր Գառնիկեան :

ընդ է դուշակել, բայց մեք զանց կ'առնու՞մք երկտասարդաց փափուկ զգացմունքը չվերառուրելոյ համար, որոնք հիմենեան քաղցրութիւնները միմիայն վայելելոյ փութալան, իսկ նորա ջահերը վառելոյ անփոյթ են իսպառ :

Սհաւասիկ վիճակագրութիւնը 1878 ամին.	
Հարսանիք	38
Ծնեալք	92
Մեռեալք	157

Քաղաքիս Հայ հասարակութիւնը մօտ հազար ընտանիք կը համարուի . ինչ ցաւալի կէտ մի է, երբ մտածելոյ լինի մէկը թէ հազար ընտանեաց մէջ միայն 92 ընտանիք կը դանուի իւր ամուսնական պարտաւորութիւնը ճանչցող և միմիայն օրինաւոր ընտանիք կազմող բեղմնաւոր մասը : Տեղս ներեր խորհրդածութեան առնուլ այն իգական մասն ալ, որոնք իրենց ամուսնական պարտուց՝ բնութեան և աստուածային օրինաց դէմ մեղանշելով պատճառ տուած են սրգէ՛ծննդեան նուազութեանը :

Առ դերագրասիւ տէր Յովհաննէս քահանայ Պօղոսեան ի Ս. Բեդեռսպուրգ .

Զպատասխանի նամակին իմոյ ընկալայ, յորում ասէք յանձնեալ դմատեանն Պատմութեան Ս. Երուսաղէմի՝ անուանի գրավածառ Պ. Իսակովին և թէ նորա միջոցաւ ունի առ մեզ հասանելապահովագրեալ և կնքեալ ի պահարանի Պարտ համարիմ յայտնել միջոցաւ լրագրիս . թէ՛ մինչև ցայսօր տակաւին չեմք ստացեալ զյիշեալ մատեանն, զոր յետ ստանալոյ փութամ գարձեալ ղեկուցանել Ձեզ ի միամտութիւն :

Տ. Հ. Թ. Ստասիւիան :

ՔԱՆԱՔԱՆ ԽՈՒՔԻ

Զմիւռնիս, 6 Յունուար

Քաղաքիս եզանակն խիստ բարեխառն կ'երթան, տակաւին ցուրտ չենք զգացած : Անձրևները թէև անպակաս, բայց ոչ սննդհատ, ինչպէս ուրիշ տարիներ կը պատահէին, այլ օր ընդ մէջ պարզ և արեգնային օգեր կը զուարթացնեն զբնութիւնը, իսկ շերեկուանէ ի վեր ձիւնային եղանակ մի ունինք, և քիչ մի ցրտին, այլ անվնաս :

—Անցեալ բշ. իտալիոյ նոր հիւպատոս պարոն Գուբերնատիս ասպետը իւր պաշտօնին գլուխն անցաւ . և տեղական կառավարութեան և իւր մեծ պաշտօնակցաց հետ փոխադարձ սյցելութիւններ կատարեց :

—Այս օրերս տեղոյս Մաքսատան տեսուչը մեծ ֆէլէիթի մի հանդիցեցաւ : Անկողին և բարձ մի մաքսաւորաց ուշագրութիւնը գրաւեցին թէ իրենց մեծութեամբ և թէ ծանրութեամբ : Հարկ եղաւ որ մէկ կողմէն բանան և անմիջապէս իրենց դիմաց ծանրագին՝ սպրանայ խաճուկ մի բացուեցաւ . որոնք էին ծանր Դանդերլաներ, խեցեղէն (պաղա) սանտրեր, արծաթի ծխատղփեր, և ուրիշ ծանրագին հագուստներ ընդամենը իբր 100,000 դահեկանի, որոնց վերայ ձեռք զնեցոյ իրաւունք ունեցաւ մաքսատան Տեսուչը :

—Այի Տիմիթիի փողոցին մէջ Յոյն օրիորդ մի արեւանդեայ փորձ փորձուեցաւ մի քանի յոյն սրիկայից կողմէ, օրիորդը իւր ճիւղերով դէմ գնեցուն դանակի սաստիկ հարուած մի կ'ընդունի թեւին վերայ, որ թէպէտև անպատուութեանէ զինքը կ'ազատէ, բայց զինքը պէտք պիտի լինի, կ'ըսեն, կտրելոյ : Հիմակ հիւանդանոցը կը գտնուի :

—Գողութիւնները կը շարունակուին . բայց կ'երևի թէ դողերը աւելի գեղորէից պէտք ունին, քան թէ ստակի . քանզի սկսած են մօտ օրերս գեղարանները կողոպտել առանց զանց առնելոյ գտած ստակներն ալ մէկտեղ վերցնելոյ : Մի քանի ալ կոչակարի խանութներ բացած են, հարկաւ այսպիսի տօն օրեր նոր սողարներու և մաշկներու պէտք ունին, և այս միջոցն աւելի սպառողն է առանց ստակի ձեռք բերելոյ համար : Նոր տեսակ գողեր ևս ելած են, որոնք կ'երևի թէ անձրևէ երկիւղ ունին, այս պատճառաւ գլխացիկն երկող մարդոց ձեռքի

անձրևապահները խելով կը յափշտակեն : Անցեալ օր կնկան մէկը, որ եկեղեցի կ'երթար, ցեխին մէջ հռելով ձեռքի անձրևապահը խեցին առին . սոյնը պատահած է շատերուն : Երկիւղ կայ որ եթէ այսպէս երթայ՝ դիտուուս ֆէնս ալ իւր ապահովութիւնը պիտի կորսուցնէ . ամառը հող չէ, բայց ձմեռը դժուար է : —Բիւստէմ փաշայի համար կը հաստատուի թէ Արևելեան Ռումելիոյ ընդհանուր կառավարիչ անուախը որոշուած է :

—Վեհափառ Սուլթանը Մէծիտիէի կարգի գոհարապարգ շքանշանը յանձնած է բարձրաՍտիֆէթ փաշային : Եր հեաը փարիզ պիտի տանի Գաղղիոյ հանարակապետութեան նախագահ Մագ—Մահոն մարալախտին նուիրելոյ :

—Նոր շքանշան մի ևս հաստատուեր է ոսկեղէն Նիշանի—Իմիտի անունով, որ միայն կառավարութեան ծառայութեան մէջ նշանաւոր եղողներուն պիտի տրուի :

—Ափրիկէի քաղկիթէն յանդի շնորհուած երկիրներուն մէջէն, ուրտեղ կան ադամանդի հանքեր, հատ մի գոհար գտնուեր է 244 դրամնոց . յայտնի է որ բանուած չէ :

—Անցեալ ամոյ 30ին Ս. Պատրիարքը բարձր Մեծ—Եպարգոսին կողմէ կոչուած լինելով, կը յուսացուի թէ բարի խոստումներով պիտի համոզէ զինքը՝ հրաժարագիրը ետ առնելոյ, որոյ վերայ ազգովին ուրախ պիտի լինիմք :

—Կրտսի թէ խառն յանձնաժողով մի կազմուելով Հայաստան պիտի զրկուի ժողովրդոց պէտքերն ի քննին առնելոյ համար :

—Վահան էֆ. որ Յունաստանի նոր սահմանա գլուխը որոշող յանձնաժողով անդամ ընտրուած էր, իւր պաշտօնէն հրաժարելով, ուրիշ մէկը իւր տեղը խրկուած է : Նոյնպէս Բոստիփոյայի յանձնաժողովը երկրորդ անդամներէն մեծա կոտան փաշայ հրաժարեր է իւր պաշտօնէն :

—Հապէշտանի թէսօրոս թագաւորի որդին որ Անգղիոյ մէջ ուսմունք և կրթութիւն ստանալոյ համար տարած էին, հիմակ Սէնտ-հարտի զինուորական վարժայանը դրուեր է :

—Նոր—Երբ մէջ Յուն. 2ին (ն. Տ.) հրդեհ մի պատահելով, Չայլոյնի բամպակի ընկերութեան մթերանոցներն և բամպակի լծնչոցներ (բրէս) այրեր են, որոց մէջ 10,121 հակ բամպակ կային :

—Կալկաթայէն Տէյն Նի— լրագրին կը գրեն թէ, Շիր Ալի Գալուէն զատուած ժամանակ նամակ մի ուղղած է առ փոխարքայն, որոյ մէջ իւր միաքը կը յայտնէ ըսելով թէ՛ Անգղիոյ հետ ունեցած իւր վեճը տէրութեանց ժողովոյ մի յանձնելէն յետոյ որ պիտի գումարի Ս. Բեդեռսպուրգի մէջ, սպա պիտի վերագառնայ իւր մայրաքաղաքը :

—Պետերհան Գիւրտ պէյի երկու որդիք Օսման պէյ և Հիւսէյն պէյ, ժամանակէ մի ի վեր ապրատուած լինելով տէրութեան դէմ, շատ չարիքներ սկսած են ընել Հայոց՝ Տիարպէթիի գաւառին մէջ : Ասոնց վերայ թէպէտև եղջէթ փաշայ զրկուեցաւ և Սպարդայի մօտերը հարուածեց զիրենք առջի բերան և ցրուեց, և իմացոյց ևս որ եթէ գան հպատակին ներողութիւն պիտի գտնեն . այսու ամենայնիւ կ'երևի թէ Ձէյթիլիցոց տարախն չգալու համար, հաւատարմութիւն չեն ըրած իզղէթ փաշայի խոստմանը, և իրենց ժողոված զօրախմբին գլուխը կեցած են ցարգ : Տարակոյս չկայ որ երկար չտեւեր իրենց ընդդիմութիւնը և Գողանցի Ահմէտ փաշայի օրինակին կը հետեւին, և Հայոց գլխէն փորձանքին մէկը պակաս կը լինի :

—Եգիպտոսի նախարարաց ժողովոյ նախագահին (վսե. Նուպար փաշայի) գիւսնատան մէջ պաշտօնեայ կարգեցան հետեւեալք .

Պ. Պ. Տիգրան Պէյ ընդհանուր քարտուղար Իսկէնտէր էֆէնտի Չէլիէլ Ա. մուավին . Մուգպիլ Պէյ Տաճկերէնի գիւսնատան տեսուչ, Էլիաս Ապէլին էֆէնտի թարգմանութեան գիւսնին տեսուչ . Ալի Աֆիլ էֆէնտին Բ. թարգմանիչ . Տիգրան էֆէնտի Եպիփան օգնական թարգմանիչ . Մոհամմէտ Գեմալ էֆ. Արաբերէնի գիւսնին տեսուչ . Մոհամմէտ էֆէնտի Էլ—Սէվրաֆի օգնական նորա :

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ

Աֆիւն. անշարժութեան մէջ . թէպէտև զնոյ մէջ զգալի մեծ փոփոխութիւն մի չկայ, այսու ամենայնիւ դէպի իջնելոյ հակամէտ է մի քանի գործեր տեղի ունեցան առանց զին որոշելոյ . այսօրուան գիւսերն են Գարահիսար 128 դահեկան եէրի Պօղատի 139 . Պօղատի 145, Եէրլի թալէքուալէ 119 դահեկանի չէքնի Եղած բուր առուծախքն է 76 շիւղով : Պատրաստի կան 2896 կողով :

ՄԱՆՈՒՅՈՒՄ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՌՈՑ ԱԶԳՍՅԻՆ ԳՊՐՈՅԱՅ ՀԱՄԱՐ

Գրէյ Հ. Գրէգոր Վ. Գրէգորի Միլի. Կոնստ. 1879 :

Ընտիր մատենագրութիւն ու մարտ պապարտիւն պարունակող հրատարակութիւնը, Վիեննայի դպրոցն ելած է ու վրան հոծ գերմանականութիւնը յայտնապահ կ'երեւայ : Առ սքիկայ Ընդն . Պատմութիւնը, ինչպէս ձակոնկ կը տեսնենք, քեպտո համառօտ է, բայց ամփոփ ու ջոտ գրութեամբք, մեզն ամեն բան ձղիւ կը պարունակէ՝ մինչեւ մեր օրերը . ու կատարեալ պատկեր մը դնէ առջեւնիս մատն . ին Տաճկառուսական պատերազմն :

Գործքին մէկ մեծ առաւելութիւնն ան է, որ մեծ շրջանայեցութեամբ իր մեզն ամփոփած է Ս. Պապի պատմութիւնը, Հայկազանց հարստութեան մինչեւ Պերիլի համաժողովը : Գործքն ձգուած չէ մատն . Հայոց մատենագրութիւնը : Ասոր մէջ կը ցուցնէ հայերէն լեզուին ամենամեծ զարգացումն ու գեղեցկութիւնը արշակունեաց բազառութեան վերնալու ատեն, զոր Ռսկեղար կ'անուանէ, ու ետքն անոր քիչ քիչ իյնալը՝ մինչեւ ժ՛ղ դար՝ ուր հոր կ'ենգանութիւն մը կ'առնու . լեզուն երկու նորածին դպրոցաց ձեռք :

Մատենագիրն իր փոքրիկ երկապիրութեան մեջ շատ որոշ գաղափար կուտայ մեզի, զանազան ազգաց բաղաբական ու բարոյական կենաց վրայ : կը գտնենք հոս ամփոփ . բայց կատարեալ պատկեր մը Յունաց, Հռոմայեցոց, ինչպէս հաւ Պարսից, Եգիպտացոց ու ամեն նոր ազգաց զարգացման ու բաղաբակրութեան աստիճանին վրայ :

Առաջիկայ ընդն . Պատմութիւնը մէկ հատիկ գիրքն է ազգային վարժոցաց համար, քի իր համառօտ ճշտութիւնը, քի իր մարտի լեզուին եւ քի միանգամայն ամբողջ ու կատարեալ ըլլալուն :

Գիւնը շատ աճան է, վասնզի 2 Ֆրանք է, եւ կրճախուի Վիեննայի Միսիարեան գրավաճառանոցն է ուրիշ ամեն ազգային գրավաճառանց քով :

Էտեմիշու Հայ օրիորդաց վարժատան համար ասոնէ գործութեան վարժուհի մի կը ընդգրուի գոհացուցիչ ամենականաւ : Յանկացող աւելի տեղեկութիւններ ստանալու համար կրնայ յիւսուսողորդարան գլխակ առ արժանապատիւ Մակար վարդապետն :

ՎԻՅԹՈՒ ԻԿՈ

Հոգակարո բանաստեղծին սոյն վերջին ընտիր գործը՝ Պ. Յ. Ս. Սըվանեան դիւրըմբունցի ռճով հայերէն լեզուի փոխադրած ըլլալով՝ այժմ մամլոյ տակ կը գտնուի : Հրատարակութիւնը դիւրացնելու համար հարկ եղաւ բաժանորդագրութիւն մը բանալ, մէն մի օրինակին 4 դրոշ գին սահմանելով : Գործը հրատարակուելէ ետքը 1) 4 մեծիտի պիտի ծախուի : Փափաքող կրնան օգուտ քաղել Յ. Բաբեյեանի դիմելով՝ որոն քով կը գտնուի բաժանորդագրութեան ցանկը : |

ՆՈՐ ԸՆԹԵՐՅԱՆ

Տղայոց վարժարան համար մօտ տարիներու մեջ հեղինակուած դասագրքերուն ամենեկ կանոնադրն ու օգտակարն է : Տեսեան տղարանի ի յոյ ընծայուած հեղինակութեամբ Մամուրեան Պ. Մատթոս պատուելոյ, եւ հետեւողութեամբ անգղիացի Չեմպլոսի կը թափան ընթացք բուսած մէկ գործոյն :

Գիւնն է մէկ Ֆրանք :

Տէր Լրագրոյս,

Վ. Կ. Գ. Պալլապալան :